

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

04.11.2016

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի ղեկան Ա. Ներսիսյանը ներկայացրեց կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նա նշեց, որ ֆակուլտետի դասախոսների կողմից ամբիոններ են ներկայացվել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնների նիստերի ժամանակ: Հանձնարարվել են այն թեմաները, որոնք արդիական են, ունեն հետազոտության համար անհրաժեշտ համակազմ, առկա է տվյալ թեմայի վերաբերյալ տեսական գրականություն: Ամբիոնների կողմից ներկայացվել են ղեկավարների խորհրդատվության օրերի գրաֆիկ, ինչպես նաև ամբիոններում ստեղծվել են ավարտական և կուրսային աշխատանքների ընթացքի մասին գրառումների մատյաններ: Ուսանողներին ժամանակին տրվել են անհրաժեշտ գրականության ցանկը, ներկայացվել աշխատանքի կառուցվածքը: Զեկուցողը նշեց նաև, որ որոշ ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ, որոնք հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 17 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական օգնության աշխատանք: 38 ուսանողի տրվել է

կուրսային աշխատանքի թեմաներ, որոնցից 21 թեմա 3-րդ կուրսի, իսկ 17-ը՝ 2-րդ կուրսի համար:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 18 ուսանող, որից 9-ը՝ հայոց լեզվից, 9-ը՝ հայ գրականությունից: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 50%-ը: Հայոց լեզվի կուրսային աշխատանքի թեմաներ է տրվել 3-րդ կուրսի 6 ուսանողների:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտություններից ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն էքսպերիմենտալ բնույթ: Ավարտական աշխատանք է գրում 19 ուսանող: Ուսանողների մեծագույն մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում: Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի 14 և Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 10 ուսանող գրում են կուրսային աշխատանքներ:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ մասնագիտական անգլերենով ավարտական աշխատանք է գրում 29 ուսանող: Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ 18 ուսանող գրում է կուրսային աշխատանք քերականությունից, իսկ 4-րդ կուրսի 29 ուսանող՝ արտասահմանյան գրականությունից: Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ 10 ուսանող մասնագիտական ֆրանսերենով գրում է ավարտական աշխատանք: Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ 3-րդ կուրսի 14 ուսանող գրում է կուրսային աշխատանք ֆրանսերենի քերականությունից, իսկ 4-րդ կուրսի 10 ուսանող՝ արտասահմանյան գրականությունից: Նշված մասնագիտությունների ուսանողները կատարել են ավարտական աշխատանքների 50, իսկ կուրսային աշխատանքների 80%-ը:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց

գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ. ասիստենտ Վ. Աղաբաբյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի ղեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2016-17 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարաձայնություններ չեն եղել:

Ֆակուլտետում առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը եղել է հետևյալը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.47 և 7.12 միավոր: Եթե ընթացիկ քննությունների միջին գնահատականը նախորդ կիսամյակի համեմատությամբ նույնն է, ապա այլ պատկեր է ընթացիկ ստուգումների պարագայում: Այստեղ նախորդ կիսամյակի համեմատությամբ մոտ 0.82-ով բարձր միջին գնահատական է արձանագրվել:

Պատմություն մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Հայոց պատմության պատմագրություն

առարկայից՝ 3.29, իսկ ամենացածրը՝ Նոր պատմություն առարկայից՝ 1.52: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Հայաստանի պատմական աշխարհագրություն առարկայից՝ 8.31, իսկ ամենացածրը՝ Համաաշխարհային պատմության աղբյուրագիտություն առարկայից՝ 6.05:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.88 և 5.22 միավոր: Նախորդ կիսամյակի համեմատությամբ գրեթե նույն պատկերն է արձանագրվել:

Պետք է նշել, որ Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է 19-20-րդ դդ արտասահմանյան գրականության պատմություն և 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականության պատմություն առարկաներից՝ 3.67, իսկ ամենացածրը՝ Հայ ժողովրդի բանահյուսություն առարկայից՝ 0.93:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Գեղարվեստական երկի վերլուծություն առարկայից՝ 8.00, իսկ ամենացածրը՝ Լեզվական վերլուծության հիմունքներ առարկայից՝ 3.94:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.90 և 9 միավոր: Ընթացիկ քննություններից Մաթեմատիկա C առարկայից առավելագույն 4 գնահատականը 44 ուսանողներից ստացել է 1 ուսանող: 1-ին բուժօգնություն և երեխայի պահպանման հիմունքներ առարկայի ընթացիկ ստուգումից 44 ուսանողներ ստացել են 9 միավոր:

Հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.75 միավոր: Ուսումնական պլանով ընթացիկ ստուգում նախատեսված չէր: Ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Հոգեֆիզիոլոգիա առարկայից՝ 2.57, իսկ ամենացածրը՝ Անձի հոգեբանություն առարկայից՝ 1 միավոր:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.31 և 8.07 միավոր: Այստեղ նախորդ կիսամյակի համեմատությամբ գրեթե 1 միավորով բարձր միջին գնահատական է դրսևորվել:

Պետք է նշել, որ այս մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Ստեղծագործական հոգեբանություն առարկայից՝ 3.70, իսկ ամենացածրը՝ Հոգեթերապիա առարկայից՝ 2.00: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Հոգեբանամանկավարժական շտկում առարկայից՝ 8.70, իսկ ամենացածրը՝ Սոցիալական մանկավարժություն առարկայից՝ 6.00:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.70 և 5.69 միավոր: Նախորդ կիսամյակի համեմատությամբ ընթացիկ քննությունների միջին գնահատականի մի փոքր աճի դեպքում մի փոքր նվազել է ընթացիկ ստուգումների միջին գնահատականը:

Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Օտար լեզվի պատմություն՝ 3.39 առարկայից: Քննությանը մասնակցած 18 ուսանողներից 14-ը ստացել են առավելագույն՝ 4 միավոր, ինչը մի փոքր բարձր ցուցանիշ է: Այս կուրսում գրանցվել է նաև ամենացածր միջին գնահատականը՝ 1.72, որը արձանագրվել է Անգլերեն-5 առարկայից:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է Երկրագիտություն /2-րդ մասնագիտական օտար լեզու/ առարկայից՝ 6.66, իսկ ամենացածրը՝ 2-րդ մասնագիտական օտար լեզու առարկայից՝ 4.00:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.38 և 5.78 միավոր: Այս մասնագիտության պարագայում ևս գրեթե պահպանվել են նախորդ կիսամյակի գնահատականները:

Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Արտասահմանյան գրականություն-2 առարկայից, որի բոլոր մասնակիցները ստացել են առավելագույն գնահատական: Ամենացածր միջին գնահատականը՝ 1.60, արձանագրվել է Ոճագիտություն առարկայից:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է Երկրագիտություն /2-րդ մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ առարկայից՝ 7.30, իսկ ամենացածրը՝ 2-րդ մասնագիտական օտար լեզու /անգլերեն/ առարկայից՝ 4.60 :

Զարմանալի է, որ նույն կուրսում և նույն դասախոսի մոտ է արձանագրվել ամենաբարձր և ամենացածր միջին գնահատականները:

2016-2017 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.38 և 6.10 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ք. Հարությունյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան